Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

«Պատմական հուշարձանների և կոլտուրական մյուս արժեքների պահպանության նկատմամբ հոգատարությունը Հայկական ՍՍՀ բաղաքացիների պարտքն ու պարտականությունն է»:
(ՀՍՍՀ սահմանադրություն, հոդված 66)

Գտնվում է հուշարձաններով հարուստ համանուն գյուղում (այժմ Երևանի հյուսիս-արևելյան թաղամասում)։

Բոլոր կենտրոնամբեթ կառուցվածքներից (Հռիփսիմե, Սիսավան, Գառնահովիտ և այլն) առավել նշանավորը հանդիսանում է Ավանի տաճարը։ Այս հուշարձանի յուրահատկությունը կազմում են անկյունային խորանները, որոնք, ի տարբերություն այլ հուշարձանների, կլոր են։

Հատակագծում արտահայտված խաչաձևությունն ընդգրկված է արևելքից արևմուտք մի փոքր ձգված ընդհանուր ուղղանկյան մեջ։ Կլոր ավանդատների մուտքերը բացվում են անցման խորշերի մեջ, որոնք հատակագծում կազմում են երեք քառորդ շրջանագիծ։

Տաճարի տեսքը արևմուտքից

Տաճարի ներսի միասնական տարածությունը կազմավորվում է կիսակլոր աբսիդ-հենախորշերով, որոնք կրում էին գմբեթային ողջ համակարգը։

Տաճարի ճակատները լուծված են շատ զուսպ և միակ շեշտը կազմում են լայն պատուհանների կամարունքները և արևմտյան շքամուտքը։ Վերջինս օժտված է գեղեցիկ, քանդակազարդ երեսակալով և վաղ միջնադարի հուշարձաններին բնորոշ լյունետով (բեռնաթափող կամարով)։

Հայկական ճարտարապետության նշանավոր հետազոտող ճարտարապետ Թ. Թորամանյանի կարծիքով տաճարը ունեցել է հինգ գմբեթ, մեկական անկյունային կլոր խորանների վրա և կենտրոնում գլխավորը։ Ցավոք, հուշարձանի ներկա վիճակը հնարավորություն չի ընձեռում այդ կարծիքը ստուգելու, քանի որ գտնվում է կիսավեր վիճակում, չեն պահպանվել փոքր գմբեթներին պատկանող մասեր։

Տաճարի ներսում դասավորված են զգալի թվով քանդակազարդ քարեր, որոնք պատկանելիս են եղել ավելի վաղ կառուցվածքներին։ 1965—66 թվականներին կատարված պեղումների ժամանակ (Կ. Ղաֆադարյան) տաճարի արևմտյան մասում հայտնաբերվեցին ավելի վաղ կառուցվածքների մնացորդներ ի հաստատումն այն մտքի, որ տաճարը հիմնադրվել է վաղ կառուցվածքի տեղում։

Պատմական աղբյուրները վկայում են, որ տաճարի կառուցման ժամանակ հայ եկեղեցին տրոհված էր երկու մասի և Ավանում ստեղծվել էր հակաթոռ կաթողիկոսություն, Հովհան Բագարանցու առաջնորդությամբ (որն սկսել է գահակալել 591 թ. և մահացել է աքսորում 610/611 թթ.)։

Պեղումներով ի հայտ եկան կաթողիկոսարանի մնացորդները, որը կառուցվել էր տաճարի կառուցման հետ միասին, նրա հյուսիսային կողմում։ Վերջինիս չափերն առավել համեստ են համեմատած Զվարթնոցի, Դվինի և Արուճի պալատների հետ։

Ավանի տաճարը վերանորոգվել է 1940—41, 1965—66 և 1968 թվականներին։

Շքամուտքի մանրամասն

Շեմամուտի մաճրամասե

Հարավ արեւելյան մույթը

Խաչքարեր

Հովհան կաթողիկոսի արձանագրությունը

Ավանում բացի տաճարից պահպանվել է ընդարձակ գերեզմանոց, ուր բազմաթիվ թվագրված խաչքարերի և տապանաքարերի հարևանությամբ պահպանվում է VI դ. հատուկ ձևեր ունեցող քառակող կոթողը աստիճանաձև պատվանդանի վրա։ Մի այլ քառակող կոթողի մնացորդ պահպանվել է տաճարի բակում։

Հուշարձանից ոչ հեռու, գյուղի տարածքում պահպանվել են միջնադարյան ուրիշ կառուցվածքներ։ Դրանցից Ս. Հովհաննես կիսավեր եկեղեցին գտնվում է տաճարից հարավ-արևելք ընկած սայլալանջի ստորոտին։

Ս. Հովհաննես եկեղեցու հյուսիսային կողմում պահպանվել է մի որմնափակ խաչքար։ Դրանից հյուսիս-արևելք, այգիների մեջ, գտնվում է նույնպես կիսավեր Ս. Աստվածածին եկեղեցին, որի հիմքերը հին են, իսկ եկեղեցին միջնադարում կատարված վերանորոգումների հետքեր ունի։ Հուշարձանին կից պահպանվել է վաղ քրիստոնեական շրջանին բնորոշ քառակող կոթողի աստիճանաձև պատվանդան։ Նման քառակող կոթողի մնացորդներ պահպանվել են գյուղում նոր՝ XIX դարում կառուցված եկեղեցու բակում։

Խոյակի մանրամասն

Թամանյան Յուլի Ալեքսանդրի

ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԸ

© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ընկերություն

Մասն. խմբագիր՝ Վ. Մ. Հարությունյան
Խմբագիր՝ Ս. Վ. Ստեփանյան
Նկարիչ՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Ասրյան
Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Հ. Ղազարյան

Հանձնված է շարվածքի 21.07.1986 թ.։ Ստորագրված է տպագրության 14.07.1987 թ.։ Ֆորմատ՝ 84×108 1/32։ Թուղթ՝ «Կավճապատ», տպագր. 0,42 պայմ. մամ., հրատ.՝ 0,4 մամ.։ Պատվեր 781։ Տպաքանակ 10000։ Գինը 15 կոպ.։ ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 2 տպարանի մասնաճյուղ, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. № 26։